875 Ես տեսնում եմ կյանքը քո անցած,

1. Ես տեսնում եմ կյանքը քո անցած,
Լսում եմ սրտիդ զարկը դառնացած,
Դու քայլում ես ճամփով մի անհայտ՝
Մերժելով Հովվին քո արդար:

Դարձի՛ր, ո՛վ մարդ, Տիրոջը քո անգին,
Որ փրկի քո կյանքը թանկագին,
Որ բուժի վերքերդ բոլոր՝
Ջնջելով դառը հուշերն անցյալի:

2. Գիտեմ՝ ունես գիշերներ դու անքուն,
Սրտումդ՝ թշնամու խայթեր բազում:
Ես եմ, որ բուժում եմ կոտրած սրտեր,
Դարձի՛ր, որ լինեմ քեզ Փրկիչ ու Տեր:

3. Ինձանից զատ չկա ուրիշ Աստված,
Որ բարձրացնում է փոշուց աղքատին:
Ինձանով է դառնում տնանկը իշխան,
Եվ ամուլ կինը՝ մայր պատվական: